

«Հետագայ» կը նշանակէ անմիջապէս ետեւէն եկող, հետքէն եկող, հետեւեալ: Օրինակ. «Հետագայ տողերը եղիշէ Չարենցի մէկ ոտանաւորէն առնուած են»:

Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չըկայ»:

Մինչդեռ «յետագայ» կը նշանակէ ետքէն եկող, յետոյ եկող: Օրինակ. «Որքեանացին մեր պատմահայրն է. յետագայ պատմիչները մեծապէս օգտուած են իր գործէն»:

«Յետագայ» կը գործածուի նաեւ ապագայի եւ կամ անցեալ ապագայի իմաստով: Օրինակ. «Յակոբ սկիզբը աղքատ էր. բայց յետագային մեծ հարստութեան տէր եղաւ»: «Հիմա չեմ կրնար այդ գործը կատարել. բայց յետագային կը խորհիմ բան մը ընել»:

Գանք այժմ փաստելու «յետագայ» ձեւին ուղիղ ըլլալը:

«Յետ» բառը, հայերէնի մէջ երկու իմաստ ունի. Ա. — Կը նշանակէ ետեւ, որ տեղ ցոյց կու տայ: Բ. — Կը նշանակէ ետքը, յետոյ, որ ժամանակ ցոյց կու տայ: Ահա Հ. Արսէն Ղազիկեանի իսկ խօսքերը. «Յետ իրաւ է թէ կը նշանակէ ետք, ետեւ... (Մի՛ գրէք... այլ գրեցէք, էջ 48):

Արդ, հայ լեզուն, այս երկու իմաստներով ալ, «յետ» բառով, բարդութիւններ ունի: Այսպէս, ետեւ-ի իմաստով. «յետախաբիլ» (նարեկացի) = ետեւ նահանջել, յետադաս = ետեւ դասուած, յետամնաց = ետեւ մնացած, յետակաց = ետեւ կեցած, յետակողմ = ետեւի կողմ: Այս օրինակներուն մէջ «յետ»ը տեղ ցոյց կու տայ:

Ետքը, ետքէն-ի իմաստով. յետածին = ետքը, ետքէն ծնած. յետամտական (Պորփիր) = ետքը մտած: Ստ. Մալխասեանի բառարանէն կ'առնեմ հետեւեալ բառերը. յետամուտ (չչփոթիլ հետամուտ բռնին հետ) = ետքը մտած, յետագիր = ետքը գրուած, եւ ճիշդ ասոնց նման՝ յետագայ = ետքը եկող: Այս վերջին օրինակներուն մէջ «յետ»ը ժամանակ ցոյց կու տայ:

Արդ, եթէ սխալ բարդութիւն մըն է «յետագայ» բառը, սխալ ըլլալու են նաեւ յետածին եւ յետամտական եւն. բառերը, որոնք սակայն՝ որպէս ուղիղ բառեր՝ գործածուած են զրարարի մէջ եւ Հայկազեան բառարանի մէջ ալ անցած:

Աւելորդ է առարկել, թէ «յետագայ» բառ գոյութիւն չէ ունեցած մեր հին մատենագրութեան մէջ. եթէ հիներու քով չենք հանդիպիր «յետագայ» բառին, սակայն գործածուած են «յետածին» «յետամտական» եւ այլ բարդութիւններ, որոնք կը թոյլատրեն, որ նման նոր բարդ բառեր իբրեւ ուղիղ ձեւ ընդունինք: Չէ՞ որ աշխարհարարի մէջ ալ կան բարդութիւն բարդութիւններ, որոնք զրարարի մէջ չկան:

Աւելին կայ: Արդէն Հ. Արսէն Ղազիկեան, որպէս քաջ հայկաբան, կը տեսնէ «յետագայ» ձեւին ուղիղ ըլլալը եւ կ'ընդունի զայն յետոյ եկողի, վերջէն եկողի իմաստով: Ահա իր բառերը. «Յետագայ երբեք պիտի չնշանակէր ետեւէն եկող, այլ յետոյ եկող, վերջէն եկող. ասոր պէտքը կը լրացնէ արդէն ապագայ բառը»: (Ընդգծումները մերն են) Մի՛ գրէք... այլ գրեցէք, էջ 49):

Բոլորովին համաձայն ենք Հ. Ա. Ղազիկեանի գրածներուն, բացի վերջին տողին մէջ յայտնած իր դադափարէն: «Ապագայ» բառին գոյութիւնը պատճառ մը չէ, որ իրեն ուրիշ հոմանիշ բառ մ'ալ գոյութիւն չունենայ: Սաւառնակ բառին գոյութիւնը պատճառ մը չէ, որ օգտուող հոմանիշը գոյութիւն չունենայ: Ունինք նաեւ «մերձակայ» = «մօտակայ», «նախարան» = «յառաջարան» «բազմածախ» = «չատածախ» (Ուպելեան), «բազմակիւծ» = «չատակիւծ» (Սարկ. յիշատակարան) եւ այլն հոմանիշները: Թողունք որ «ապագայ» եւ «յետագայ» բառերը բոլորովին նոյն իմաստը ունեցող բառեր չեն, որ կարելի ըլլայ մէկը միւսով փոխարինել: Օրինակ. կ'ըսենք «ապագա փայլուն է». բայց «յետագա փայլուն է» բացատրութեան չենք հանդիպած:

Կարծեմ թէ այսքանը բաւական է համոզուելու համար, թէ «հետագայ» ձեւը պէտք է գործածել «հետեւեալ» իմաստով, իսկ «յետագայ» բառն ալ կարելի է ուղիղ կերպով գործածել ետքէն, յետոյ եկողի իմաստով:

«Յետագայ» բառը արդէն տարիներ առաջ գործածած Հ. Զարբհանէլեան «յետագայ պատմիչ» (Հայկ. հին Դպրատան պոմ., էջ 435). Մալխասեան. «յետագայ հեղինակներ» (Սերէոսի պոմ. եւ Որբենացի, էջ 14): Հետեւեալ նախադասութեան մէջ, Շ. Նարդուհի, ուղիղ ձեւով գործածած է «յետագայ» բառը. «Հեղինակները եւ Հոռոմայեցիները, յետագային՝ Ֆրանսացիները...»¹: Մալխասեան թաթերթը եւ Յառաջ օրաթերթը գովաբանութեան ուղիղ ձեւով կը գրեն «յետագան». «հոգեբանական տաղանդը յետագան»:

1. Յառաջ, 6 Դեկտ. 1958, էջ Բ:
2. Մալխասեան, 9 Յուլիս, 1959, էջ Բ:
3. Յառաջ 9 Փետր. 1961, էջ Բ:
4. Զարբհան, 20 Սեպտ. 1960, էջ Դ:
5. Զարբհան, 23 Օգոստ. 1960, էջ Դ:

զայն յայտնուեցաւ...»²: «Յետագային է միայն, որ հայ զրահանութիւնը...»³. Զարբհան օրաթերթը երբեմն կը գրէ ուղիղ, երբեմն սխալ: Սխալ են օրինակի համար, հետեւեալները «հետագային առնուք ինչ զին պիտի վճարեն»⁴: «Հետագային կոչուեցաւ աշխարհի զօրաւորագոյն մարդը»⁵: Նոյնքան սխալ են «Ազգակ»-ի հետագայ «հետագայ»ները. «հետագային՝ այդպիսի օրացոյցները...»⁶. «հետագային ըրիտ էր ու վայրագ»⁷: Ընդհատական նոյն «Ազգակ»ը ուղիղ ձեւով գրած է հետեւեալ նախադասութեան «յետագայ» բառը. «Յետագային կը նուիրուի ուսուցչութեան»⁸: Նմանապէս ուղիղ են «Արեւելք» օրաթերթի սա տողերը. «Արեւին շուրջ արբանեակներու յետագայ արձակումները փաստեցին»⁹:

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

6. Ազգակ, 16 Սեպտ. 1960, էջ Գ:
7. Ազգակ, 17 Հոկտ. 1960, էջ Գ:
8. Ազգակ, 17 Հոկտ. 1960, էջ Գ:
9. Արեւելք, 19 Սեպտ. 1960, էջ Գ:

ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Արեւելագիտական 25րդ միջազգային համաժողովի կազմակերպիչ յանձնախումբի հրահրով, 1960ի Օգոստոսի 8ի կէսօրէն վերջ, աւստրիական օդանավ Մոսկուա կը հասնէ: Վիեննայէն եւ Էրեսբի Ուին-էն Ուիլիամ Արչեր, Պրատնէյն եւ Էրեսբի Ուին-էն Պրատնէյն: Առաջ մաքսային խուզարթը փորձեցողները: Առաջ մաքսային խուզարթը փորձեցողները: Ուրիշ զանազան խուզարթը փորձեցողները: Ուրիշ զանազան խուզարթը փորձեցողները:

Մոսկուայի այդ արդիական պահուիլին մէջ մեծապարկ հիւրանոցը: Մոսկուայի այդ արդիական պահուիլին մէջ մեծապարկ հիւրանոցը: Մոսկուայի այդ արդիական պահուիլին մէջ մեծապարկ հիւրանոցը: Մոսկուայի այդ արդիական պահուիլին մէջ մեծապարկ հիւրանոցը:

պէս կովկասագիտութեան նուիրուած բաժնին՝ որուն մաս կը կազմէր Հայկականը: Ու քանի որ զանազան բաժնիներու հարուստ դասախօսութեանց եւ զեկոյցներուն բոլորին անկարելի էր ներկայ գտնուիլ, հարկ էր որոշ ծրագիր մը մշակել՝ ժամանակը կարելի եղածին չափ օգտագործելու:

Համաժողովի Օգոստոս 11ի նիստին, առաւօտեան ժամը 9-30ին, պիտի բերէի իմ համեստ բաժինս ալ՝ Անտիոքի Անտիոքի նուիրուած ուսումնասիրութեամբ մը, անգլիերէն, որուն համար քսան վայրկեան սահմանուած էր, Բիւզանդագիտական բաժնին մէջ:

Օգոստոս 9ի առտուն, մեզի տրամադրուած ինքնաշարժներով դաշինք Մոսկուայի հսկայ համալսարանը, որուն դահլիճին մէջ պիտի կատարուէր համաժողովին բացումը: Կը մասնակցէին 1000էն

ուէին: Եկեղեցական թանգարանը, որ այժմ երեք սրահներով կը ներկայանայ, հնադարեան քիչ բան ունի՝ որ նոյնիսկ ԺՁ դար հասնի, բացի մէկ քանի մասնատուիէ (Գեղարդի, երկաթէ խաչի եւն.): Զարմանալիօրէն մարդս յուսախար կ'ընէ չղոյու-թիւնը այն մեծարժէք դոհարադարձ իրեղէնե-րուն, որ իրը թէ գոյութիւն ունէին էջմիածնի գանձատան մէջ, նոյնիսկ քանի մը տասնեակ տա-րիներ առաջ: Նշմարեցի անձրեւէ փճացած կամ վնասուած տղածոյ հին վարադոյրներ, որոնց խնամոտ պահպանման գործին այժմ միայն ձեռք դարձուած է: Ուշ է պատասխանատուներ փնտռել: Տաճարին ներքին վերանորոգումը եւ վերստին զարդարումը՝ գեղագիտական մարզին մէջ՝ ըստ իս՝ բոլորովին անդոհացուցիչ է, եւ շատ բան կը զեղէ տաճարին հնադարեան վեհութիւնէն:

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Արդէն իսկ երկարած այս տպաւորութիւններս կ'ուզեմ աւարտել՝ յայտարարելով որ Հայաստան իրապէս բազմակողմանի զարգացման մէջ է:

Իրը Հայադիտութեան նուիրուած համեստ աշ-խատող մը, բնական է, իմ իրաւասութիւնէս եւ կարողութիւնէս վեր է քաղաքագիտական անպէտ մարդանքներ ընել: Ես հոս կը գրեմ ու կը խօսիմ բաներու մասին՝ զոր տեսած եմ աչքերովս, ինչ-պէս համառօտակի ըսած էի նաեւ Երեւանի ձախ-նասփութէն:

ԻՄ ՊԻՇԵՐԻՍ ԸՆԾԱՆ

Իմ գիշերիս ընծան է այս. չարչարանքով Գաղուած պըտուղ, առանձնութեան մըռայլ ծառէն, Որուն ոստերն ու տերեւները կը բուրեն Մահացու խումկ մը տրտմաբով:

Ընդունէ՛ գայն. քախծոտ հոգւոյս իմ կայծերէն, եւ շիթերէն ալ արիւնիս ջերմացնելով՝ Ծաղկեցուցի. եւ լըռութեան բիրեղներով Զայն փանդակած եմ գաղտնօրէն:

Ան խօսք մըն է քախանգահին, աղօթաձայն, Որպէսզի դուն ըլլաս շուշանն իմ երազիս, Պարտէզին մէջ գիշերական:

Որպէսզի դուն ըլլաս միայն շունչ մ'երկնային եւ բացարձակ նըրիրումով ցոլացնէ գիս Զինջ էութեանդ հայելին...

ԱՐՍԵՆ ԵՐԿԱՌ

Անուրանալի է Երեւանի եւ Խորհրդ. Հայաս-տանի ներկայ վերաշինական վերելքը. անուրանա-լի է Հայադիտական զարգացումը, Հայ մշակոյթին ստացած նոր ոյժն ու կարեւորութիւնը:

Անտարակոյս, այս դատին մեծ նպաստ կ'ընայ բերել Սփիւռքի եւ Խորհրդ. Հայաստանի միջեւ աւելի սերտ մշակութային փոխարարերութիւ-նը: Արտասահմանեան շատ արժէքաւոր ոյժեր, այժմ, երկրորդական պատճառներով, դժբախտա-րար, անտեսուած են ու չեն կրնար Հայաստան այցելել. ասիկա պէտք է երկրին վարելչներուն մասնաշաղկապ ուշադրութեան առարկայ դառնայ:

Իսկ ինչ կը վերաբերի իմ մասին Մոսկուայէն մինչեւ Երեւան շրջող փափսուքներուն, նկատեցի որ այդ բոլորը հնարուած է «Բազմավեպ»ի մի-ջոցով լոյս տեսած կարգ մը դրախտա-քննադա-տականներս նսեմացնելու նպատակով:

Այժմ ուրախ եմ ըսելու որ ամէնքն ալ տեսան՝ թէ իրը համեստ ոյժով Հայ մշակոյթին նուիրեալ մը, նպատակ ունիմ ճշմարտութիւնը միշտ քօ-ղադերծել - նաեւ Օրբի խնդրին մէջ - առանց երկդիմի նպատակներու, առանց քաղաքական կամ կուսակցական յետին միտքերու: Եւ այս՝ նաեւ ապագային:

Վստահ եմ թէ ճշմարտութեան սէրը միշտ պիտի յաղթանակէ ու եղբայրացի մեզ բոլորս, Հայ-րենիքի՝ թէ Սփիւռքի մէջ:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

Գ Է Պ Ի Ա Ի Ա Ր Ա Յ Ի

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՎ

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Շար. տես՝ Բազմ. 1961, թ. 1-2, էջ 34)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԻՆ

Վարդան - սպարապետ Հայաստանի
Վասակ - Մարդպան Հայաստանի
Վահան Ամատունի - նախարար
Արշաւիր Կամսարական - նախարար
Դեւոնդ Երեց
Եղիշէ - ատենադպիր
Արմենակ, - զինակիր Վարդանի
Սամուէլ - լրտես, կողմնակից Վարդանի
Վարդանոյշ - մայր Վահանիկի
Գուժկան Վրաստանի
Գարշոյլ - մտերիմ Վասակի
Բարապան մը:

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Տեսարանը կը ներկայացնէ շքեղ սեմնակ մը՝ պետական շէնքին մէջ. սեղան, ա-քոռներ, բազմոց, եւ աշտանակներ՝ սե-ղաններուն վրայ:

ՏԵՍԻՆ ԱՌԱՋԻՆ

Վարդան Մամիկոնեան եւ Արմենակ

Վարդան - (խօսելով Արմենակին հետ՝ բեմ կ'ելլէ) Ի՞նչպէս կարելի է հաւատալ այսպիսի ահաւոր դաւի մը: Դեռ անցեալ օր, Վասակ Աւետարանի վրայ երդումը-րաւ. իր շրթներն ալ դպան այդ սուրբ Գրքին:

Արմենակ - Երբ մէկը հաւատք, խիղճ, բարոյական չունի՝ ամէն բանի կարող է: Վարդան - Ուրեմն այս տեղեկագիրը Վասակ ի՞նչը պատրաստած է, եւ ինչը ձեռքովը կ'ուղէր պարսիկ պատուիրակին յանձնել:

Արմենակ - Շատ պաշտօնական քարտէզ է եւ տեղեկագիր: Տեսէք, Մարդպանին կնիքը կայ վրան:

Վարդան - Եւ այդքան թեթեւօրէն վար-ուել այսպիսի վտանգաւոր թուղթի մը հետ...:

Արմենակ - Ամենավարպետ դոյերն ալ, շատ անգամ, ամէնէն ապուշ կերպով կը բռնուին:

Վարդան - Կասկածներ ունէինք արդէն. շատեր դիւ զուշացուցին այդ մարդէն. բայց մարդս զիմացինն իր սրտին պէս կը դատէ: Ես տարիներով հայրենիքէն հե-ղառու, կարօտը սրտիս մէջ, ամէն հայ՝ եղ-րու, կարօտը աղջին համար իր կեանքը դո-պատրաստ աղջին համար իր կեանքը դո-հելու: Վասակ միմակ չէ. այդ դաւը ճիւ-ղաւորութեան ունի: Նա լաւ կը ճանչնայ մեր բոլոր նախարարներուն նկարագիր-ները. զիտէ տկարամիտն ու փառասէրը: Նա նուրբ միտք ունի, հոգեբան է, սողա-ցող է, գիտէ հմայել եւ կաշառել, շոյել եւ սպառնալ: Պէտք է զիշեր ցերեկ հըս-կել իր քայլերուն:

Արմենակ - Վասակ խիստ հսկողութեան տակ է: Ամէն կողմ հաւատարիմ սպաներ, զինուորներ՝ զիւղացիի, փերեզակի, ա-ռետրականի, ծառայի կերպարանքի տակ կը գործեն:

Վարդան - Բոլորն ալ վստահելի՞ են: Արմենակ - Կասկածնիդ արդար է. Պար-սիկները իրենց ոսկիներով մեր մաքուր նկարագիրը խաթարեցին. սակայն առանց վրան ալ հսկողներ կան:

Վարդան - Խոհեմութիւնը երբեք չա-փաղանց չէ: Այդ վաւերագիրը պէտք է մեր աչքերը լաւ բանայ:

Արմենակ - Օձին գլուխը դտանք, դիւ-րին է ջախջախելը:

Վարդան - Դժբախտաբար հազար գըլ-խանի օձ է: